ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«10» մարտի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-18/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ու Թ Յ Ու Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի 22.02.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը և բողոքն առանց քննության թողնելու մասին 10.03.2016թ. դիմումը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) 22.02.2016թ. ներկայացված բողոքով «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման

աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով 09.02.2016թ. հայտարարվել է «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-02/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգ: Ընթացակարգի հայտարարության տեքստը հաստատվել է «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-02/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 01.02.2016թ. թիվ 01 որոշմամբ: Ընթացակարգի հրավերի բովանդակության «Գնման առարկայի բնութագիրը» բաժնում նշվել է. «Գնման առարկա է հանդիսանում «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայության ձեռքբերումը 1 չափաբաժնով՝ ֆինանսատնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայության տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

Սույն հրավերով նախատեսված ծառայությունների համար պահանջվում են հետևյալ լիզենզիաները. (աուդիտորական ծառայություններ իրականացնելու լիցենզիա):

Մասնակիցը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում»:

Ընկերության պնդմամբ նման սահմանափակում սահմանված չէ «Լիցենզավորման մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքներում, ՀՀ այլ օրենքներում և դրանցից բխող այլ իրավական ակտերում, ուստի մասնակցության իրավունքի նման սահմանափակումը չի բխում ՀՀ օրենսդրության պահանջներից, ավելին՝ հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված որակավորման չափանիշներին:

Ընկերությունը նաև հայտնել է, որ՝

- Հայաստանի Հանրապետությունում աուդիտորական գործունեությունը լիցենզավորված է, լիցենզիան տրվում է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից անժամկետ, բարդ ընթացակարգով՝ աուդիտորական ընկերության աուդիտի որակավորում ունեցող աշխատակիցների աուդիտորական վկայականների հիման վրա,
- ՀՀ ֆինանսների նախարարության կողմից որակավորված աուդիտորները իրենց որակավորման ուժով և շնորհիվ տիրապետում են միջազգային հաշվապահական

ստանդարտների խորհրդի (ՄՀՍԽ) կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների (ՄՀՍԽ) ստանդարտներին,

- ՀՀ օրենսդրությամբ աուդիտորական ընկերությունները մրցակցային դաշտում իրավահավասար են,
- ՀՀ կառավարության 2010թ. մարտի 11-ի 235-Ն որոշմամբ ֆինանսնական հաշվետվությունների միջազգային ստանդարտները ամբողջությամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետությունում: ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով խոշոր ընկերությունը պարտավոր է իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստել վերոհիշյալ ստանդարտներին համապատասխան,
- «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակվող ֆինանսական հաշվետվությունները հրապարակվում են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքին համապատասխան,
- «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 100 տոկոսը պատկանում է Հայաստանի Հանրապետությանը և ընկերությունը ծառայությունների ձեռքբերումը պետք է իրականացնի «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Միաժամանակ Ընկերությունը հայտնել է, որ հրավերով հստակ նշված չէ, թե աուդիտորական ծառայություններն ընկերության գործունեության որ ժամանակահատվածի համար են անհրաժեշտ, իսկ հրավերով ներկայացված պահանջը այն մասին, որ մասնակիցը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում, խախտում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, չի ապահովում մրցակցության հավասար պայմաններ և համահունչ չէ գնման ձևի ընտրությանը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 5-րդ հոդվածի 4-րդ կետի 2-րդ եթակետը, 12-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակատերը, ինչպես նաև 45-րդ և 48-րդ հոդվածները, Ընկերությունը խնդրել է «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-02/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգով հայտարարված մրցույթը համարել չեղյալ և պատվիրատուին պարտավորեցնել տեխնիկական բնութագիրը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի նշված կետերին համապատասխան՝ դրանով ապահովելով հավասար մրցակցությունը, որն Ընկերությանը հնարավորություն կտա հավասար հիմունքներով մասնակցելու մրցույթին:

Կենտրոնին ներկայացված 10.03.2016թ. գրությամբ Ընկերությունը խնդրել է առանց քննության թողնել 22.02.2016թ. ներկայացված բողոքը:

2. ԳԲԽ-18/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի 10.03.2016թ. դիմումը, առաջարկում է «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից ֆինանսա-տնտեսագիտական գործունեության ստուգման աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՐՋԷԿ-ՊԸԾՁԲ-02/16» ծածկագրով պարզեցված ընթացակարգը չկայացած հայտարարելու և պատվիրատուին «Գնումների մասին» ՀՀ օրենքի նշված կետերին համապատասխան տեխնիկական բնութագիր կազմելուն պարտավորեցնելու մասին «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ-ի կողմից 22.02.2015թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների վերապատրաստման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-14/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Եղիազարյան